

ԹԱՔՆԿԱԾ
ՆԵՐՈՒԺ

ADAM GRANT

HIDDEN
POTENTIAL

The Science of Achieving Greater Things

ԱԴԱՄ ԳՐԱՆՏ

ԹԱՔՆԿԱԾ
ՆԵՐՈՒԺ

Ավելիին հասնելու գիտությունը

Թարգմանությունն անգլերենից՝
Լիանա Զաքարյանի



ԵՐԵՎԱՆ
2026

ՀՏԴ 159.923 Գրանտ

ԳՄԴ 88.3

Գ 871

Գրանտ Ադամ

Գ 871 Թաքնված ներուժ: Ավելիին հասնելու գիտությունը / Ա. Գրանտ.- Եր.: Newmag, 2026.- 328 էջ:

Մենք ապրում ենք մի աշխարհում, որը կուրորեն հրապուրված է տաղանդով: Մենք փառաբանում ենք շնորհալի աշակերտներին, բնատուր մարզիկներին, երաժիշտ հրաշամանուկներին: Սակայն, հիանալով ի ծնե առավելություն ունեցողներով, մենք աչքաթող ենք անում այն ճանապարհը, որը կարող ենք անցնել ինքներս: Մենք թերագնահատում ենք այն հմտությունները, որոնք կարող ենք սովորել, և այն բարձր մակարդակը, որին կարող ենք հասնել:

Մենք բոլորս կարող ենք ավելի լավը դառնալ: Եվ երբ հնարավորությունն ինքն իրեն չի գալիս, միշտ կարելի է բացել դեպի այն տանող դուռը: Այս գրքում Ադամ Գրանտը ներկայացնում է նոր մոտեցում՝ ձգտումները բարձրացնելու և սպասումները գերազանցելու համար: Նա համադրել է գիտական տվյալները, անսպասելի բացահայտումները և տպավորիչ պատմությունները, որոնք կարող են մեզ լսարաններից տեղափոխել բիզնես գրասենյակներ, խաղահրապարակներից՝ օլիմպիական մարզադաշտեր, ստորգետնյա անցումներից՝ տիեզերք: Գրանտը պատմում է, թե ինչպես է պետք բնավորության կարևոր հմտություններ ու մոտիվացիոն համակարգեր ձևավորել՝ մեր ներուժն իրացնելու համար:

ՀՏԴ 159.923 Գրանտ

ԳՄԴ 88.3

Գլխավոր գործընկեր՝

Ֆասթ Բանկ

fastbank.am



ISBN 978-9939-967-98-1

Copyright © 2023 by Adam Grant

Ադամ Գրանտ «Թաքնված ներուժ» © 2026, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Նախաբան <i>Բերրունին աճող վարդեր</i>	7
I Հմտություններ, որոնք բնավորություն են ձևավորում	29
<i>Կապարելագործվելու ունակության կապարելագործում</i>	
1 Անհարմարության սիրահարները	35
<i>Հարմարվել անհարմարավետ վիճակին, որն ինքնակրթման անբաժան մասն է</i>	
2 Սպունգ-մարդ	57
<i>Կլանելու և հարմարվելու կարողության զարգացում</i>	
3 Անկատարության կողմնակիցները	77
<i>Ինչպես գտնել կապարելության և անկապարության ոսկե միջինը</i>	
II Նպատակամղումը խթանող կառույցներ	101
<i>«Փայտամածներ»՝ խոչընդոտները հաղթահարելու համար</i>	
4 Չանձրալի առօրյայից ազատվում ենք	105
<i>Մեր կյանքում կիրք մտցնելով</i>	
5 Ինչպես կանգ չառնել դեպի նպատակ տանող ճանապարհի կեսին	127
<i>Ծրջանաձև շարժում դեպի առաջընթաց</i>	
6 Մարտահրավեր նետել ձգողության ուժին	153
<i>Մազերից քաշելով՝ դուրս հանել ճահճից</i>	

III Հասարակությունների համակարգեր	179
<i>Բացելով դռներն ու պատուհանները</i>	
7 Առաջադիմել կարող է յուրաքանչյուր երեխա	183
<i>Դպրոցներ, որտեղ աշակերտները զարգացնում են իրենց լավագույն որակները</i>	
8 Ոսկու արդյունահանում	211
<i>Հավաքական ինտելեկտը թիմային աշխատանքում</i>	
9 Անմշակ ադամանդ	237
<i>Մեծ ներուժ ունեցող մարդկանց հայտնաբերում՝ աշխատանքային հարցազրույցների և ընդունելության քննությունների ընթացքում</i>	
Վերջաբան Դեպի հաղթանակ	271
<i>Ինչպես հասնել ցանկալի արդյունքին</i>	283
<i>Երախտագիտության խոսք</i>	293
<i>Ծանոթագրություններ</i>	297

ՆԱԽԱԲԱՆ

Բետոնին աճող վարդեր

Լսել եք վարդի մասին, որը բուսնել է բետոնի ճեղքից՝
Ապացուցելով, որ բնության օրենքները սխալ են:
Այն սովորել է քայլել՝ չունենալով ոտքեր:
Որքան էլ զվարճալի թվա, չի հրաժարվել իր երազանքից
և սովորել է մաքուր օդ շնչել¹:

Թուփաք Շարուր

«Վարդը, որ բուսնել էր բետոնի ճեղքից»

Մի քանի տաղանդավոր երիտասարդներ 1991-ի գարնանային մի ցրտաշունչ օր հավաքվել էին Դետրոյթի մերձակայքում գտնվող մի հյուրանոցում: Նրանք դահլիճում փնտրում էին իրենց տեղերը, մյուսները ցածրաձայն քչփչում էին: Հենց սկսվեց ժամանակի հետհաշվարկը, դահլիճում քար լռություն տիրեց: Լսվում էր միայն ժամաչափի ձայնը՝ կըտ, կըտ, կըտ: Բոլորը հայացքները հառել էին սև ու սպիտակ քառակուսիների շարքերին: Պատանիների շախմատի ազգային առաջնությունն էր:

Վերջին մի քանի տարիների ընթացքում մրցաշարում հաղթել էին հիմնականում առանձին առարկաների թեքումով և մասնավոր դպրոցների սաները, որտեղ շախմատը պարտադիր ուսումնական առարկա է: Գործող չեմպիոնը «Դալթոնն» էր՝ Նյու Յորքի էլիտար նախապատրաստական դպրոցներից մեկը, որի սաները երեք տարի անընդմեջ նվաճել էին տիտղոսը:

«Դալթոնում» շախմատի ուսուցումը կատարվում է Օլիմպիական ուսումնական կենտրոնի սկզբունքներով: Մանկապարտեզի բոլոր սաները մեկ

կիսամյակ շախմատ էին ուսումնասիրում, առաջինդասարանցիներին հատկացվում էր մեկ տարի՝ խաղի հիմունքները յուրացնելու համար: Ամենատաղանդավոր աշակերտներն իրավունք էին ստանում հաճախել շախմատի արտադասարանական խմբակ, որտեղ դասավանդում էին շախմատի լավագույն վարպետները: Այդ ժամանակ դպրոցի առաջին գրոսմայստերը հրաշամանուկ Ջոշ Վայցկինն էր, որի կյանքի պատմությունը երկու տարի անց հիմք տվեց «Որոնելով Բոբի Ֆիշերին» կինոհիթին: Ո՛չ Ջոշը, ո՛չ էլ դպրոցի մյուս տաղանդավոր շախմատիստն այդ տարի առաջնությանը չէին մասնակցում, սակայն «Դալթոնը» հիանալի թիմ էր հավաքել:

Հարլենից* եկած Raging Rooks² թիմին ոչ ոք լուրջ մրցակից չէր համարում: Նրանք անվստահ քայլերով մտան դահլիճ, բոլոր հավաքվածները հայացքները շրջեցին նրանց ուղղությամբ: Պատանիները խիստ տարբերվում էին մասնավոր դպրոցներում սովորող իրենց սպիտակամորթ մրցակիցներից: Raging Rooks թիմում աղքատ ընտանիքներից սերող «գունավոր» տղաներ էին. վեցը սևամորթ էին, մեկը՝ լատինամերիկացի, մեկն էլ՝ ասիական ծագումով ամերիկացի: Նրանք ապրում էին Մանհեթենի աղքատ թաղամասում, որտեղ տարածված էր թմրամոլությունը, բռնությունը և հանցագործությունը: Շատերը մեծացել էին ոչ լիարժեք ընտանիքներում. ապրում էին մայրերի, մորաքույրների կամ տատիկների հետ, որոնք երբեք չէին կարող վճարել «Դալթոնի» դպրոցի ուսման վարձը:

Raging Rooks թիմում Հարլենի JHS 43 միջնակարգ դպրոցի ութերորդ և իններորդ դասարանների աշակերտներ էին: Ի տարբերություն «Դալթոնի» իրենց մրցակիցների՝ նրանք չունեին ո՛չ տարիների փորձ, ո՛չ էլ առաջնություններին մասնակցելու հմտություն: Թիմի որոշ անդամներ սկսել էին շախմատ խաղալ միայն վեցերորդ դասարանում: Թիմի ավագ Քասոն Հենրին շախմատ խաղալ սովորել էր տասներկու տարեկանում՝ այգում պարապելով թմրավաճառի հետ:

Ազգային առաջնությունում հաղթանակ տանելու համար պետք էր շատ բարձր միավորներ հավաքել: «Դալթոնի» նման մեծ թիմերը կարող էին մինչև վեց միավոր կորցնել՝ առանց որևէ ծանր հետևանքի: Մինչդեռ

* Թաղամաս Նյու Յորքում՝ Մանհեթեն կղզու հյուսիս-արևելքում: Բնակեցված է գլխավորապես սևամորթներով: (Բոլոր ծանոթագրությունները՝ newmag-ի):

Raging Rooks-ի նման թիմերի համար, որոնց անդամները խիստ սակավաթիվ էին, կարևոր էր յուրաքանչյուր միավորը: Ոչ ոք չէր կարող ապահովագրել նրանց: Հաղթելու նվազագույն հնարավորություն ստանալու համար բոլորը պետք է անթերի ելույթ ունենային: Թիմը լավ սկսեց: Առաջին իսկ փուլում ամենաթույլ խաղացողը հաղթեց մրցակիցներից մեկին, որը հարյուր միավոր առավելություն ուներ: Թիմի մյուս անդամները ևս հուսախաբ չարեցին. բոլորը պարտության մատնեցին իրենց մրցակիցներին, որոնք շատ ավելի փորձառու էին: Raging Rooks-ը դուրս եկավ կիսաեզրափակիչ և զբաղեցրեց երրորդ տեղը:

Չնայած իրենց անփորձությանը՝ տղաները գաղտնի զենք ունեին: Նրանց մարզիչը երիտասարդ գրոսմայստեր Մորիս էշլին էր: Քսանհինգամյա Մորիսը ներգաղթել էր Ճամայկայից: Նա որոշել էր կոտրել այն կարծրատիպը, թե մուգ մաշկով երեխաները խելացի չեն: Նա իր անձնական փորձով գիտեր, որ տաղանդով օժտված են բոլորը, բայց քչերին է տրվում այն դրսևորելու հնարավորությունը: Նա ներուժ էր տեսնում այնտեղ, որտեղ մյուսներն այն չէին նկատում, և չէր վախենում «բետոնի մեջ վարդեր աճեցնել»:

Ազգային առաջնության նախապերջին փուլում Մորիսը նկատեց, որ իր թիմը սկսում է թերանալ: Մրցակցի նկատմամբ առավելության հասնելուց հետո Կասոն Հենրին կոպիտ սխալ թույլ տվեց և հազիվ ոչ-ոքի գրանցեց: Մեկ այլ խաղացող էլ արդեն համարյա հաղթում էր, երբ մրցակիցը վերցրեց նրա թագուհին և հաղթանակ կորզեց: Տղան, չկարողանալով զսպել իր զգացմունքները, լացակունաձ դուրս վազեց սենյակից: Պարտիաներից մեկն էլ այնքան վատ մեկնարկեց, որ Մորիսը գերադասեց դուրս գալ սրահից ու չտեսնել իր խաղացողի ցավալի պարտությունը: Նախապերջին փուլի ավարտին Raging Rooks-ը երրորդից նահանջեց հինգերորդ հորիզոնական:

Մորիսն իր սաներին հիշեցրեց, որ պետք է հաշվի նստել գրանցած արդյունքների հետ: Raging Rooks-ը պետք է միայն հաղթեր հաջորդ չորս պարտիաներում և աղոթեր, որ մյուս թիմերը պարտություն կրեն: Սակայն անկախ նրանից, թե ինչ տեղի կունենար, Raging Rooks-ի խաղացողներն արդեն հայտնվել էին երկրի լավագույն երիտասարդ գրոսմայստերների շարքում: Մրցաշարում առաջին տեղ զբաղեցնելն այլևս այդքան կարևոր չէր, քանի որ նրանք կարողացել էին գրավել հարյուրավոր մարդկանց սրտերն ու գերազանցել բոլոր ակնկալիքները:

Շախմատը հայտնի է որպես հանճարեղների խաղ: Շախմատում, որպես կանոն, հաջողության են հասնում նրանք, որոնց ուղեղն ունի զանազան հաջորդականություններ մտապահելու, տարբեր սցենարներ արագորեն վերլուծելու և տասնյակ քայլեր հաշվարկելու ունակություն: Շախմատիստների ուժեղ թիմ ունենալու համար պետք է հետևել «Դալթոնի» օրինակին. հավաքել տաղանդավոր երեխաների և վաղ տարիքից շախմատ պարապել նրանց հետ:

Մորիսն արեց ճիշտ հակառակը. որոշեց մարզել միջին դասարանների այն աշակերտներին, որոնք հետաքրքրություն էին ցուցաբերում խաղի նկատմամբ և ունեին պարապելու հնարավորություն: Թիմը հիմնականում բաղկացած էր միջին առաջադիմություն ունեցող աշակերտներից: Մորիսն իր խաղացողներին չէր ընտրել այն պատճառով, որ նրանք աչքի էին ընկնում որոշակի տաղանդով: «Իմ սաներից ոչ ոք հատուկ ունակություններով օժտված չէր», – հիշում է Մորիսը:

Այնուամենայնիվ, վերջին փուլում Raging Rooks-ը պահպանեց իր դիրքերը: Թիմի երկու խաղացողներ հաղթանակ տարան, Կասոնն էլ համառորեն շարունակում էր պայքարել իրենից շատ ավելի բարձր վարկանիշ ունեցող մրցակցի դեմ: Բոլորը հասկանում էին, որ եթե նույնիսկ նա կարողանար հաղթանակ տանել, դա բավարար չէր լինի, որպեսզի թիմը հաղթող ճանաչվի: Այդ տուրի առաջին պարտիան Raging Rooks-ն ավարտեց լավ ցուցանիշով. ոչ-ոքի:

Մի քանի րոպե անց Մորիսը սրահի մյուս ծայրից բղավոցներ լսեց: «Պարո՞ն էջլի, պարո՞ն էջլի»: Պարզվեց՝ երկարատև պայքարից հետո վերջնախաղում Կասոնը հաջողեցրել էր հաղթանակ տանել «Դալթոնի» լավագույն խաղացողի նկատմամբ: Բոլորը զարմանքից ապշել էին: Առաջատար թիմերն իրենց դիրքերը զիջել էին Raging Rooks-ին: Տղաները ծափահարում էին, գրկախառնվում ու ուրախ բղավում. «Մենք հաղթեցինք, մենք հաղթեցինք»:

Աղքատ ընտանիքների սևամորթ երեխաներն ընդամենը երկու տարվա ընթացքում սկսնակներից դարձան ազգային չեմպիոններ: Ամենամեծ անակնկալն այն չէր, որ հաղթեցին թվացյալ անհաջողակները, այլ այն, թե ինչպես դա հնարավոր եղավ: Հետագայում Raging Rooks թիմի անդամներն իրենց կամային հատկանիշների շնորհիվ ավելի մեծ հաջողությունների հասան, քան շախմատի առաջնությունում հաղթանակ տանելն էր:

Թաքնված ներուժ ունի յուրաքանչյուր ոք: Այս գիրքն այն բացահայտելու մասին է: Տարածված կարծիք կա, թե շնորհալի ծնվում են, ոչ թե դառնում: Այդ իսկ պատճառով բոլորը մեծարում են տաղանդավոր երիտասարդ գիտնականներին, մարզիկներին և երաժիշտներին: Սակայն մեծ հաջողությունների հասնելու համար հրաշամանուկ լինելը պարտադիր չէ: Այս գրքում կպատմեն, թե յուրաքանչյուր ոք ինչպես կարող է իր մեջ զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք թույլ կտան մեծ բարձունքների հասնել:

Որպես կազմակերպական հոգեբան՝ ես իմ կարիերայի զգալի մասը նվիրել եմ այն գործոնների ուսումնասիրությանը, որոնք մարդկանց օգնում են հաջողության հասնել: Իմ կատարած բացահայտումները ձեզ հավանաբար կստիպեն կասկածի տակ առնել ներուժի մասին ձեր իսկ համոզմունքները:

Հետազոտություններից մեկի շրջանակում հոգեբանները ցանկանում էին պարզել երաժիշտների, արվեստագետների, գիտնականների և մարզիկների շրջանում բացառիկ ունակությունների դրսևորման առաջնային պատճառները³: Այդ նպատակով հետազոտողները հարցազրույցներ անցկացրին 120 մասնակիցների հետ՝ Գուգենհայմի ֆոնդից* դրամաշնորհներ ստացած քանդակագործներ, միջազգային ճանաչում ունեցող դաշնակահարներ, մաթեմատիկոսներ, նյարդաբանության ոլորտի հետազոտող-գիտնականներ, օլիմպիական խաղերի մեդալակիր լողորդներ և համաշխարհային կարգի թենիսիստներ: Հետազոտողները հարցազրույցներ վարեցին նաև նրանց ծնողների, ուսուցիչների և մարզիչների հետ: Պատկերացնո՞ւմ եք, թե որքան մեծ էր նրանց զարմանքը, երբ պարզեցին, որ հարցվողներից քչերն էին մանուկ հասակից աչքի ընկել բացառիկ ընդունակություններով:

Վերը նշված քանդակագործների տարրական դասարանների նկարչության ուսուցիչների խոսքով՝ նրանցից ոչ ոք մանուկ հասակում եզակի ունակություններով աչքի չի ընկել: Դաշնակահարներից միայն մի քանիսը կարող են պարծենալ, որ մինչև ինը տարեկանը հաղթել են մեծ մրցույթներում: Մաթեմատիկոսներն ու նյարդաբանները տարրական և

* Ոչ առևտրային կազմակերպություն, որն աջակցում է ժամանակակից արվեստի զարգացմանը:

միջին դասարաններում ընդհանուր առմամբ լավ են սովորել, բայց ոչնչով աչքի չեն ընկել ուժեղ աշակերտների շրջանում: Լողորդներից գրեթե ոչ ոք վաղ տարիքում ռեկորդներ չի սահմանել. մեծամասնությունը հաղթանակ է տարել տեղական մրցույթներում, բայց ոչ մարզային կամ ազգային առաջնություններում: Թենիսիստների առյուծի բաժինը մրցաշարերից դուրս է մնացել առաջին մի քանի փուլերից հետո: Տեղական մրցույթներում բարձր արդյունք գրանցելու համար նրանք մի քանի տարի ջանադիր աշխատեցին: Հարցազրույցների ժամանակ մարզիչները նշել են, որ այս մարզիկները մյուսներից առանձնացել են ոչ թե իրենց արտասովոր տաղանդի շնորհիվ, այլ մոտիվացիայի: Այն նրանց չի տրվել բնությունից, այլ ձևավորվել է ժամանակի ընթացքում՝ ծնողների կամ ուսուցիչների օգնությամբ: Որպես արդյունք, հետազոտողները եկել են հետևյալ եզրակացության. «Այն, ինչ կարող է սովորել որևէ մեկը, կարող է սովորել յուրաքանչյուր ոք, եթե նրա համար *համապատասխան պայմաններ* ստեղծվեն»:

Վերջին հետազոտությունների արդյունքները ևս հաստատում են այս պնդման ճշմարտացիությունը: Այդ հետազոտությունների համաձայն՝ մաթեմատիկա, բնագիտություն կամ օտար լեզու առարկաների նոր թեման յուրացվում է 7-8 դասաժամում: Այս օրինաչափությունը նկատվել է հազարավոր աշակերտների և ուսանողների շրջանում:


Բնականաբար, ոմանք թեման լիակատար յուրացնում էին նույնիսկ քիչ թվով պարապմունքներից հետո, բայց պատճառը նրանց ավելի ընդունակ լինելը չէր: Բոլորի հմտությունները կատարելագործվում էին նույն արագությամբ⁴, սակայն այստեղ մեծ դեր էր խաղում աշակերտների կամ ուսանողների նախնական գիտելիքի բազան: Ոմանք ավելի արագ էին հաջողության հասնում, քանի որ տվյալ թեմայի վերաբերյալ լրացուցիչ գրականություն էին ընթերցել, մյուսներն էլ իրենց դասընկերների նկատմամբ առավելություն էին ունենում այն բանի շնորհիվ, որ թեման նախապես ուսումնասիրում էին իրենց ծնողների օգնությամբ կամ ինքնուրույն: Այսպիսով կարելի է ասել, որ այսպես կոչված բնատուր կարողությունների դրսևորումը հաճախ կախված է հնարավորությունների և մոտիվացիայի առկայությունից կամ բացակայությունից:

Մարդու ներուժը գնահատելիս մենք միշտ մի կոպիտ սխալ ենք թույլ տալիս. կենտրոնանում ենք ելակետի վրա կամ այլ կերպ ասած՝ այն կարողությունների, որոնք նա ունի տվյալ պահին: Այն աշխարհում, որ-


տեղ ընդունված է փառաբանել բնածին տաղանդը⁵, հեռանկարային են համարվում այն մարդիկ, որոնք առաջին հայացքից առանձնանում են զանգվածից: Այնուամենայնիվ, հաջողակ մարդկանց անցյալն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ բոլորի բնատուր ունակություններն իրարից խիստ տարբերվում են: Մարդուն միայն տվյալ պահին ունեցած ձեռքբերումների հիման վրա գնահատելով՝ մենք զրկվում ենք նրա ամբողջ ներուժը տեսնելու հնարավորությունից:

Երբ որևէ մեկը սկսում է կարողությունների զարգացման իր ճանապարհը, ոչ ոք չի կարող գուշակել, թե նա ինչի կարող է հասնել: Ունենալով սովորելու հնարավորություն և մոտիվացիա՝ յուրաքանչյուր ոք կարող է ձեռք բերել հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ ավելի ու ավելի մեծ նվաճումների հասնելու համար: Ներուժը կախված է ոչ թե նրանից, թե որտեղից եք սկսում ձեր ճանապարհը, այլ թե որքան հեռուն եք պատրաստ գնալ: Պետք է կենտրոնանալ ոչ թե ելակետի վրա, այլ այն ճանապարհի, որը պետք է անցնեք:

Կարևորն այն չէ, թե որտեղից եք սկսում



Այլ այն, թե որքան հեռուն եք գնալու



Յուրաքանչյուր Միցարտի, որն ունակ է շատ վաղ տարիքում երաժրշտության ոլորտում ֆուրոր անել, բաժին են ընկնում բազմաթիվ Բախեր, որոնց տաղանդը ծաղկում է ավելի բարձր տարիքում: Այդ մարդիկ չեն

ծնվում բացառիկ ունակություններով. դրանց մեծ մասը նրանք ինքնուրույն են զարգացնում: Նրանք, որոնք մեծ հաջողությունների են հասնում, հազվադեպ են օժտված լինում բնատուր տաղանդով: Որպես կանոն, նրանց կարողությունները ձեռքբերովի են:

Նպատակային զարգացման ազդեցությունն անտեսելը կարող է սարսափելի հետևանքներ ունենալ: Դա մեզ ստիպում է թերագնահատել այն նպատակները, որոնց կարող ենք հասնել, և անտեսել այն տաղանդները, որոնք կարող ենք ձեռք բերել, եթե չսահմանափակենք թե՛ մեզ, թե՛ ուրիշներին: Մենք չենք ուզում դուրս գալ մեր հարմարավետության գոտուց, մեզ զրկում ենք բազմաթիվ հնարավորություններից, չենք նկատում մարդկանց թաքնված ներուժը և ինքներս մեր առջև փակում ենք բազում դռներ:

Ներուժը բացահայտել հնարավոր է միայն սեփական ուժեղ և թույլ կողմերը հավասարապես հաշվի առնելու դեպքում: Սակայն պետք է հիշել, որ առաջընթացը պարզապես դեպի կատարելություն տանող ճանապարհներից մեկը չէ: Կատարելագործվելն արդեն իսկ ձեռքբերում է, և ես ուզում եմ բացատրել, թե ինչպես կարելի է հաջողությամբ անել դա:

Այս գիրքը ոչ թե փառասիրության մասին է, այլ ձգտումների: Փիլիսոփա Ագնես Քալարդը նշում է, որ փառասիրությունն այն արդյունքն է, որին մարդը ցանկանում է հասնել⁶, իսկ ձգտումն արտացոլումն է նրա, թե ինչպիսին նա հույս ունի դառնալ: Ամենևին կարևոր չէ, թե որքան գումար եք վաստակում, ինչ տիտղոսներ եք նվաճել կամ ինչ մրցանակներ եք շահել: Դրանք վկայում են հասարակության մեջ ձեր ունեցած դիրքի մասին, բայց ոչ հաջողության: Նույնը կարելի ասել նաև քրտնաջան աշխատանքի վերաբերյալ: Այն, իհարկե, շատ կարևոր է, սակայն առավել կարևոր է անձնային աճը: Անձնային աճ ապահովելու համար, իհարկե, հարկավոր է ավելին, քան պարզապես տրամադրվածությունը: Այդ ճանապարհի սկզբում պետք է ձեռք բերել այն հմտությունները, որոնք շատերը, որպես կանոն, անտեսում են:

Անհրաժեշտ որակներ

Մոտավորապես այն նույն ժամանակ՝ 1980-ականների վերջին, երբ Raging Rooks-ը սովորում էր շախմատ խաղալ, Թենեսի նահանգում մի

համարձակ փորձ իրականացվեց: 79 դպրոցներից ընտրված ավելի քան 11,000 աշակերտների, որոնց մեծ մասը սերում էր աղքատ ընտանիքներից, պատահականության սկզբունքով բաշխեցին տարբեր դասարաններում՝ մանկապարտեզից մինչև երրորդ դասարան: Սկզբում հետազոտողները նպատակ ունեին ստուգել, թե դասարանում աշակերտների փոքրաթիվ լինելն ինչպես է ազդում նրանց առաջադիմության վրա: Սակայն աշխարհում մեծ հեղինակություն վայելող տնտեսագետ Ռաջ Զեթին որոշեց ստացած տվյալներն օգտագործել նաև ձևավորված դասարանների մյուս առանձնահատկությունները վերլուծելու համար:

Զեթիի կատարած հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հաջողության հասնելն այնքան էլ կախված չէ մարդու բնածին տաղանդներից, որքան կարելի է ենթադրել:

Թենեսի նահանգում իրականացված փորձի արդյունքներն ապշեցուցիչ էին: Զեթին կարողացավ կանխատեսել, թե փորձի մասնակիցներն ինչ հաջողությունների էին հասնելու ավելի մեծ տարիքում. ընդ որում, նա դա արեց՝ պարզապես ուսումնասիրելով մանկապարտեզի դաստիարակների տվյալները: Այն աշակերտները, որոնց դաստիարակները համեմատաբար ավելի փորձառու էին, 25 տարեկանում զգալիորեն ավելի շատ գումար էին վաստակում, քան իրենց հասակակիցները:

Որքան փորձառու է մանկապարտեզի դաստիարակը, հետագայում այնքան ավելի մեծ է լինում այն երեխաների եկամուտը, որոնց նա դասավանդել է:

